Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ԱՎԵՏՄԱՆ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնությունն ենք բերում աշխարհասփյուռ մեր ժողովրդին Ավետման տոնի առիթով եւ շնորհավորում կանանց՝ Մայրության եւ գեղեցկության օրվա կապակցությամբ:

Աշխարհի փրկության համար Քրիստոսի մարդեղացման հրեշտակաձայն ավետիսն ենք վերստին հիշում նվիրական այս տոնին, որ մեզ բերում է նաեւ հորդորը Տիրամոր հեզ օրինակով աստվածային բարերար կամքին հնազանդվելու, Ավետարանի լույս պատգամներով ապրելու եւ գործելու:

Աստվածածնի նման խոնարհությամբ, առ Աստված հավատարմությամբ կանայք պիտի արդյունաբերեն իրենց բացառիկ առաքելությունը՝ նոր սերունդ դաստիարակելու, ընտանեկան օրինյալ հարկը սիրով եւ հոգատարությամբ գորացնելու, նաեւ ազգային-եկեղեցական մեր կյանքում իրենց կոչումը բարի գործունեությամբ արդյունավորելու: Ճշմարիտ գեղեցկությունը առաքինազարդ հոգում է կանաց ու մայրերի, ովքեր հավատքով եւ մարդկանց հանդեպ սիրով լեցուն օրինյալ արգասիքներ են բերում ազգային մեր անդաստանում:

Թող Սուրբ Աստվածածնի գթառատ բարեխոսությամբ Տերն օրհնի բոլոր կանանց եւ մայրերին, շնորհի արեւշատություն, երկնապարգեւ երջանկություն եւ պահի ու պահպանի Ամենախնամ Իր Սուրբ Աջի հովանու ներքո: